Տիտոս սկսաւ յամի տեառն ՀԹ. ինք-
նակալեաց ամս Գ: Սա որդի էր Վեսպի-
անոսի. սա մինչ պաշարեալ ունէր զԵ-
րուսաղէմ, Ինքնակալ եղաւ. քանզի լու-
ւան զմահ հօր նորա զօրքն՝ և թագա-
ւորեցուցին զնա: Սա էր լի ամենայն իմաս-
տութեամբ և բարի առաւել քան զհայրն
իւր: Սա իբրև թագաւորեաց, զօրականացն
իւրոց պատուիրեաց մի զի ինքնակալեալ է
սարսեցին 'ի նմանէ: Այն սա Տիտոս՝ զԵ-
րուսաղէմ՝ զոր հայրն իւր 'ի նեղ արկեալ
էր և պաշարեալ, էառ զնա կրակով. քանզի
նաֆտեցին զծայրն նետին, և կրակեցին և
ւցին 'ի քաղաքն, որ այրեցաւ: Նաև քա-
կեաց զտաճարն և տարաւ 'ի Հռոմ, ըզ-
Հրէայսն բնաջինջ արարեալ անտի: Սա
բազում աղաչեաց զՀրէայսն՝ հնազանդիլ
նմա, և մնալ աշխարհով և քաղաքով և
տաճարաւն՝ յիշխանութեան նորա: Ամե-
նայն պաշարումն՝ թէ՛ Վեսպիանոսի և
թէ՛ իւրն. . . . եկաց ամս ԻԳ: Սա մեռաւ
'ի չափ այրական, և թաղեցաւ մերձ հօր

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան